

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2013 թ. հունվարի 21-24-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ֆլորենցիայում (Իտալիա) կայացած «Միգրացիան Եվրամիության և իր հարևան երկրներում» մասնագետների վերապատրաստման դասընթացին և տվյալների հավաքագրման ու վերլուծության վերաբերյալ աշխատաժողովին,
- ✓ 2013թ. փետրվարի 22-ից մարտի 1-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 44-րդ նստաշրջանին և հարակից միջոցառումներին, սեմինարներին,
- ✓ 2013թ. փետրվարի 25-ից մարտի 2-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Տ. Բաբախանյանը մասնակցել են ք. Քիշնուում (Մոլդովա) կայացած «Պարենային ապահովություն. Գնահատում և գործողություն» խորագրով առցանց ուսուցման շրջանավարտների համար տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը: